ԳԻՐՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ. ԱՌՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑՈՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ՎԵՐԱՊԱՏՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել Անահիտ Պարսամյանի «Օշինդրի բույրը կամ սուրբ Վահան Գողթնացի» վիպակը՝ նվիրված Հայ Եկեղեցու այդ փոնելի սրբի կյանքին ու նահատակության պատմությանը[1]:

Վահան Գողթնացու մասին հայ մատենագրությունից մեզ հասած ամենաընդարձակ տեղեկությունը Արծկեի Երաշխավոր վանքի վանահայր Արտավազդի (հայտնի է նաև Աբրահամ անունով) «Սուրբ Վահանի վկայաբանություն»-ն է: Նա 714 թվականին մեկնել է Ասորիքի Ռուծափ (Ռուզաֆա) քաղաքը եւ Գողթնացու նահատակության վայրում ստույգ տեղեկություններ հավաքել, որոնք հիմք են կազմել սրբի վկայաբանությունը կազմելու համար: Այդ գրվածքը հայտնի է ճառընտիրներից. երկու ընդարձակ խմբագրություններով, որոնք հետագայում որոշ կրճատումներով մտել են Հայսմավուրքների մեջ:

Հենվելով սրբի մասին պահպանված մատենագրական այդ եւ մյուս տեղեկությունների վրա եւ օգտագործելով վարքագրական ժանրի որոշ ոճական տարրեր՝ հեղինակը փորձել է գեղարվեստական պատումի ձեւով Գողթնացու կերպարը յուրովի վեր հանել այն պատմական միջավայրում, որտեղ նա գործել է եւ ուր տեղի է ունեցել նրա նահատակությունը:

Վիպակի համար պատմական հենք է ծառայում քաղաքական եւ կրոնական այն իրավիճակը, որը Հայաստանում ստեղծվել էր ութերորդ դարի սկզբին արաբական տիրապետության հետեւանքով:

Բռնակալները 703 թվականին Հայաստանում կատարեցին մի անլուր ոճրագործություն, որը մարդկային առումով ամենաքստմնելին էր նրանց մյուս բոլոր բռնությունների մեջ: Խալիֆաթի իշխանության նկատմամբ հավատարմության երդում ստանալու պատրվակով նրանք Նախիջեւան եւ Խրամ հրավիրեցին 1200 հայ իշխանների եւ նրանց փակելով փայտաշեն եկեղեցիներում՝ հրդեհի մատնեցին: Ողջակիզվածների մեջ էր նաեւ Գողթնացու հայրը՝ Գողթնի իշխան Խոսրովը: Իսկ իշխանների զավակներին գերի տարան Դամասկոս եւ այնտեղ մահմեդականացրին, այդ թվում եւ չորսամյա Վահանին, նրան վերանվանելով Վահաբ: Դրանով փաստորեն ծրագրվել էր քրիստոնյա ընտանիքներում հայ մանուկների մեջ սերմանված լույսի առաջին հունդերն աճեցնել խալիֆաթի հողի վրա եւ նրանց հետագայում դարձնել բռնապետության իավար գործերի սպասարկու:

Չնայած օտար միջավայրին, օտար լեզվին եւ խորթ ուսուցմանը՝ փոքրիկ Վահանը շատ շուտով մեծ ձիրքեր է ի հայտ բերում եւ շատ բաներով առավել լինում իր հասակակիցների մեջ: Տիրողները գնահատում են Վահանի ձիրքերը եւ նրան դարձնում արքունի դպրապետ:

---

1 **Անահիտ Պարսամյան**, Օշինդրի բույրը կամ Սուրբ Վահան Գողթնացի, Ս. Էջմիածին, 2010:

Վիպակի սկզբում Վահանի կյանքը պատկերվում է արեւելյան պալատին հատուկ գունագեղ միջավայրում: Աշխարհական վայելքներն ու իշխանությունը առատորեն թափվում են ինչպես փրփրած գինին՝ գավաթի պռունկներից: Վիպակում համոզիչ գույներով նկարագրվում է այդ նյութապաշտական թանձր միջավայրը, ուր ոչ ոք չի նկատում, որ Վահանը մեծացել եւ ձեւավորվել է որպես միայնակ ճգնավոր անապատում: Պալատական պաշտոնյա դարձած Վահանի հոգում երբեք չի ջնջվում այն ամենը, ինչ նա տեսել էր չորս տարեկանում: Նրա արյունը բողոքում է երակներից եւ իրենն է պահանջում: Նույնիսկ խորոված մսի հոտը նրան հիշեցնում է այն ահավոր ողջակիզումը:

Վիպակի պատումը ընդմիջարկվում է Գողթնացու ճանապարհային օրագրով: Այդ գեղարվեստական հնարքի միջոցով Ա. Պարսամյանը հաղորդում է հերոսի ապրումները, քայլ առ քայլ պատմելով, թե ինչպես է տրամաբանական ընթացքով գծագրվում այն ճանապարհը, որը Գողթնացուն տանելու հասցնելու էր նահատակի պսակի ընդունմանը:

Այդ ամբողջ մղձավանջային իրավիճակի մեջ կար, սակայն, նաեւ լուսավոր մի կետ, գրում է հեղինակը, դա Վահանի ուսուցիչն էր՝ Համմադ աբ-Ռավիան՝ արաբական հին ու նոր քնարերգության գիտակ մի մարդ, հոգով բարի ու լայնասիրտ: Վիպակում նրա կերպարով փաստորեն ստեղծվում է մի լուսավոր երանգ, ուղիղ հակապատկերը այն մութ ու մռայլ գույների, որոնց մեջ ընկղմված էր արեւելյան պալատական կյանքը, լի՝ իշխանատենչությամբ, ընչաքաղցությամբ ու մութ խարդավանքներով:

Հայ մատենագրությունից հայտնի է, որ Հովհաննես Գ Օձնեցի Կաթողիկոսը այդ շրջանում մեկնել է Դամասկոս, Ոմար ամիրապետի մոտ եւ նրանից թույլտվություն է ստացել, որ հայ գերյալ եւ վտարյալ իշխաններն ու նրանց զավակները վերադառնան հայրենիք եւ տեր կանգնեն իրենց հայրենական ժառանգությանը:

Եւ ահա վիպակի պատումը նոր ընթացք է ստանում. նկարագրվում է քաղաքական իրավիճակի այդ նպաստավոր փոփոխությունը, որից օգտվելով, Գողթնացին Ոմար ամիրապետից թույլտվություն է խնդրում վերադառնալու հայրենի Գողթն:

Արտավազդի վկայաբանության մեջ նկարագրված է Գողթնացու եւ ամիրապետի հանդիպումն ու խոսակցությունը, որն, իբրեւ պատմական իրողություն, հարազատ ոճով մեջբերված է վիպակում:

Ամիրապետն ասում է.

-Մի՛ թողնիր մեզ, որդյա՛կ: Եթե որեւէ բանի պակասություն ունես, քեզ կդարձնեմ իմ թագավորության երեւելիներից, փառավոր՝ իշխանությամբ եւ գանձով:

-Եթե ամեն ինչ ինձ կրկնապատիկ տրվի իմ գերության դիմաց, դա ինձ չի կարող եր պահել: Արձակեցե՛ք ինձ, որ տեսնեմ իմ հայրենի երկրի ավերածությունների որչափությունը եւ ձեր հրամանով գործակալ նշանակվելով՝ վերադառնամ ձեզ մոտ,- լինում է Գողթնացու պատասխանը:

Ամիրապետը, հիմք ընդունելով տասնմեկ արաբ զորականների՝ Գողթնացու մասին հայտնած նպաստավոր կարծիքը, նրան թույլատրում է վերադառնալ Գողթն: Գողթնացին վերադառնում է հայրենիք եւ տեր է կանգնում իր ժառանգությանը, ամուսնանում Սյունյաց իշխանի դստեր հետ:

Հարազատ մնալով պատմական իրողությանը, վիպակում պատկերվում է այն

ճամփաբաժանը, որի առջեւ կանգնում է Գողթնացին: Տեր կանգնելով հայրենի կալվածքներին, նա փաստորեն համարում է, որ դրանով տեր է կանգնում լոկ աշխարհային ժառանգությանը, բայց դա կարող էր լոկ աշխարհային բարիքներ տալ. մինչդեռ հոգեւոր բարիք կարող էր տալ միայն հայրենի ճշմարիտ հավատը: Ուրեմն՝ նա պետք է տեր կանգներ նաեւ իր սուրբ ժառանգությանը՝ հայրենի հավատին եւ եկեղեցուն: Եւ այդպես Գողթնացին անբեկանելի մի խորհրդով վերահաստատվում է քրիստոնեության մեջ, սկսում է բացահայտ դավանել իր հայրենի հավատը:

Վիպակի պատումը մոտենում է իր տրամաբանական հանգուցալուծմանը: Խալիֆաթի իշխանությունները սկսում են Գոթնացուն որոնել որպես մահմեդականությունն ուրացածի: Իսկ մյուս կողմից նրան շրջապատող մարդիկ զգուշանում են նրա բռնած այդպիսի ընթացքից, որը հղի էր բազում վտանգներով:

Հատկանշական է, որ հեղինակը ճիշտ է ըմբռնել Գողթացու նահատակության հոգեւոր իմաստը՝ այն է, լոկ այդ արտաքին դեպքերը չէ, որ նրան մղում են դեպի կամավոր զոհի ճանապարհը:

Քրիստոնեության մեջ վերահաստատվելով, նա փաստորեն հրաժարվում է մահմեդականությունից, որը, թեկուզեւ մանուկ հասակում, բռնի էր պարտադրվել: Եւ եթե խալիֆաթի իշխանությունները իրեն որոնում են որպես ուրացյալի, ուրեմն այժմ կարիք կա բացերես վկայելու իր՝ քրիստոնեական կրոնը դավանելը, դրանով միաժամանակ իր ճակատից ջնջելու բռնի դավանափոխության խարանը:

Տեսնելով, որ քրիստոնեության մեջ իր վերահաստատվելու հետեւանքով կարող է չարիք պատճառվել ուրիշներին, Գողթնացին հեռանում է հայրենի գավառից, մեկ տարի դեգերում Վրաց երկրում: Վերադառնում է: Սկսվում են նոր փառապանքներ: Նա սկսում է վանքից վանք անցնել:

Վիպակում համոզիչ եւ պարզ ոճով նկարագրվում է, թե Գողթնացին ինչո՞ւ է իր հոգեւոր պրպտումների համար հանգրվան որոնում վանական միջավայրում: Հետապնդվելով խալիֆաթի իշխանությունների կողմից, մերժվելով իր շրջապատի մարդկանցից, պարզ էր, որ նա այլեւս անելիք չուներ աշխարհիկ միջավայրում:

Վիպակում մի առանձին գլխում պատմվում է վանահայր Հովնանի հետ Գողթնացու հանդիպման մասին:

Հատկանշական է նրա զրույցը վանահոր հետ:

- Դժվար է, որդի՛ս,- խոսեց վանահայրը,- այնպե՛ս բռնել գիտեն ակամա շեղված մարդու կոկորդից՝ նրա հոգին բռան մեջ հավաքելու տենչով, սակայն հոգին ոգեղեն է, նրանց պիղծ թաթերի մեջ չի սեղմվի, արիացի՛ր: Ամե՛ն բան գիտեմ: Անապատի մեր խորքում թեեւ՝ անտեղյակ չենք բռնատիրական ժամանակի չարաշունչ անցուդարձին:

- Պատրաստ եմ ճակատագիրս ընդունելու, հայր սուրբ, պատրաստ եմ ու հոժար, եւ .... վաղո՛ւց, դեռ ա՛յն ժամանակից, երբ գիտակցությանս հասավ տեղի ունեցածը,- պատասխանում է Գողթնացին:

Վանահոր՝ աշխարհիկ զգայականությունից զտված ձայնը Գողթնացին ակամա համեմատում է փաճկաց արքունիքի պաշտոնյաների նյութով թանձրացյալ ձայնի հետ, պարզ զգալով, որ այդ երկու ձայները գալիս են երկու տարբեր աշխարհներից:

Գողթնացին այդ դեգերումների ժամանակ այցելում է նաեւ Բզնունյաց նահանգի Արծկեի Երաշխավոր վանքը, այնտեղ զրույցներ ունենում վանահայր Արտավազդի հետ: Հենց այս վանահայրն էլ, ինչպես նշեցինք, հետագայում գրել է սրբի վկայաբանությունը:

Սակայն վանքերում եւս հետամուտ ձեռքը հասնում է նրան: Տեղի իշխանուհին Գողթնացուն կարգադրում է հեռանալ իր գավառից: Այստեղ վերջնականապես գծվում է նրա ուղիղ ճանապարհը դեպի նահատակի պսակը: Գողթնացին ճանապարհ է ընկնում դեպի Ռուծափ, այնտեղ Ոմար ամիրապետի առջեւ խոստովանելու իր դարձը դեպի հայրենի կրոնը: Ահա թե այդ պահը ինչպես է նկարագրում Գողթնացու վարքագիր Արտավազդը. «Այդպես հասավ մի անծանոթ ու սակավամարդ անապատ: Միավերարկու, անթուլանալի սրտով, ինչպես շատ ծարավկոտ եղջերուները՝ ջրերի աղբյուրին, նա կարոտել էր Աստծո սիրուն: Գնաց հասավ այնտեղ, ուր արաբների իշխանն էր: Ոչ թե հանդգնորեն դեպի մահն էր գնում, այլ իր ճշմարիտ հավատին հաստատություն եւ նրանց սրությունից հրաժարվել էր ցանկանում»:

Գողթնացին հասնում է Ռուծափ, ներկայանում արաբ ամիրապետին եւ բաց ճակատով խոստովանում, որ վերահաստատվել է քրիստոնեության մեջ: Այդ խոստովանությունը որոտի պես է պայթում բռնակալի պալատում:

Մարտիրոսի պսակի ընդունումը վիպակում նկարագրված է Հայսմավուրքներից մեզ ծանոթ ոճի տարրերով:

Խալիֆաթի պալատում մի վերջին անգամ փորձում են աշխարհային բարիքների խոստումներով Գողթնացուց եւ գնել նրա հոգին, նրա բնիկ հավատը: Սակայն մեկ անգամ ընմիշտ լույսը ճանաչածը խավարն այլեւս չի ընտրի...

- Ձեզնով ինձ հետ խոսում են դեւերը. դրանք գերգեսացոց երկրում խնդրեցին լինել խոզերի իշխան եւ ծովում խեղդվեցին: Ձեր հետ կմահանան եւ ձեր խոսքերն ու չար խրատները,- լինում է Գողթնացու պատասխանը:

Ամիրապետը հրամայում է նրան պալատից դուրս տանել եւ սպանել:

Նախքան դահճապետին ներկայանալը Գողթնացին գոհության աղոթք է մատուցում Տիրոջը եւ խնդրում.

- Զորացրո՛ւ ինձ խմելու վերջին գավաթը:

Վահան Գողթնացին նահատակվում է Շամի ամիրապետի օրոք, 737 թվականի մարտի տասնյոթին:

Հարկ է նշել, որ Մայր Աթոռի հրատարակչությունը ավելի վաղ լույս ընծայեց Անահիտ Պարսամյանի «Շուշան Վարդենի» վիպակը՝ նվիրված Հայ եւ Վրաց եկեղեցիների ընդհանրական տոնելի սրբի՝ Շուշանիկի կյանքին ու նահատակությանը: Սուրբ Վարդան Մամիկոնյանի դստեր վկայաբանության այդ նորօրյա գեղարվեստական վերապատումը լավ ընդունվեց ընթերցողների կողմից: Ակամայից միտք է ծագում, լավ չէ՞ր լինի, եթե ստեղծվեր հայ միջնադարյան սրբախոսության ավանդությունների վրա հիմնված մերօրյա վարքագրությունների մի մատենաշար, որը ընթերցողներին մատչելի լեզվով ծանոթացներ Հայ եկեղեցու սրբերի կյանքին ու վկայաբանությունը:

Ամփոփելով ասենք, որ թեեւ վիպակը գրված է որպես Վահան Գողթնացու կյանքի ու նահատակության մերօրյա գեղարվեստական մի յուրօրինակ վերապատում, Անահիտ Պարսամյանը միեւնույն ժամանակ հարազատ է մնացել տվյալ դարաշրջանի իրողությանն

ու միջավայրի կոլորիտին, այն բոլոր մատենագրական տվյալներին, որոնք սրբի մասին պահպանվել են վանահայր Արտավազդի գրվածքում եւ Հայսմավուրքներում: Ամբողջ նյութը, սակայն, միաժամանակ շարադրված է գեղարվեստական ջերմ շնչով, պարզ լեզվով եւ հավատքի ոճով:

Հեղինակը պատումը երբեմն ընդմիջարկում է քնարական շեղումներով, յուրօրինակ գեղարվեստական հնարքների միջոցով պատմելով վանքից վանք Գողթնացու միայնակ դեգերումների, խոհափիլիսոփայական մտորումների, հայ վանականների հետ հոգեւոր թեմաներով նրա զրույցների մասին: Ընթերցողը հաղորդակից է դառնում այն անբեկանելի հոգեւոր ընթացքին, որով Գողթնացին պատրաստվում է, ինչպես ասում են՝ բաց դաշտում բաց ճակատով դեմ դուրս գալու բռնությանը եւ ի գին նահատակության վկայելու իր հայրենի դավանանքը, ունենալով իր միակ զենքը՝ հոգեւոր սուրը: Գողթնացու այդ վկայությունը միաժամանակ վկայությունն էր նաեւ այն իրողության, որ հայ զորական ուժը բազմիցս էր բաց դաշտում (այլ ոչ ենգաբար, ինչպես անում էին բռնակալները) ճակատամարտ տալիս եւ փայլուն հաղթանակների հասնում թվով գերազանց հակառակորդի նկատմամբ:

Հայ եկեղեցին Վահան Գողթնացու հիշատակը տոնում է «Ապայից» կոչվող տոներին, նաեւ ուրիշ օրերի՝ այլ սրբերի հիշատակի հետ: Կա նրան ձոնված մի շարական, որ, ըստ ավանդության, գրել է նրա քույր Խոսրովիդուխտը: «... Որպես զքաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ, կատարեցեր զընթացս արիաբար յազգացն հարաւայնոյ, դասաւորեալ ընդ անմարմնականսն... »:

ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ